ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և գործի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին

ԵԴ2/2550/02/24 ք. Երևան
22 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Թումասյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ծանոթանալով ըստ հայցի «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2024-30» ծածկագրով «Մարտունու ԲԿ» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերը 1-ին չափաբաժնի մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումին և կից փաստաթղթերին

ՊԱՐԶԵՑ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը 08.04.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2024-30» ծածկագրով «Մարտունու ԲԿ» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերը 1-ին չափաբաժնի մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Ա. Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 09.04.2024 թվականին:

Դատարանի 11.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Հայցադիմումը 11.04.2024 թվականին կրկին ներկայացվել է Դատարան, իսկ դատավոր Ա.Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 12.04.2024 թվականին:
Դատարանի 11.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը թույլ տրված նոր խախտման հիմքով վերադարձվել է:
Հայցադիմումը 16.04.2024 թվականին կրկին ներկայացվել է Դատարան, իսկ դատավոր Ա.Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 17.04.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝
1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
…,
5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ՝ որոշումն անհապաղ ուղարկելով լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2024-30» ծածկագրով «Մարտունու ԲԿ» ՓԲ ընկերության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հրավերը 1-ին չափաբաժնի մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 2024 թվականի հունիսի 7-ը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի (www.datalex.am) միջոցով:
3. Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
4. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Թումասյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.04.22 13:24:28